# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ցանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսի Մայր Աթոռիս Դիւանը լիազօրուած է վճռով հաստատելու թէ Հայ Կաթողիկէ մեր հոգեւոր եղբայրներից ոմանք, վերջին տարիներին լծուած են դաւանափոխութեան աշխատանքի մեր Մայր Եկեղեցու եւ ժողովրդի ծոցում, իսկ Լեւոնեան միաբանութեան անդամները Հռոմում, իրբապարակաւ քաջալեր ու հովանաւորող են հանդիսանում Մայր հայրենիքը լքողներին:

Մայր Աթոռս սպասում է Հայ Կաթողիկէ միաբանութեանց անդամներից՝ յարգել Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու քրիստոնէական բազմադարեան հեղինակութիւնը, մեր օրերի միջեկեղեցական էկումենիկ յարաբերութիւնների բարերար ոգին եւ մեր վերածնուած ժողովրդի հայրենաշէն զգացումները:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

20 Նոյեմբեր 1976 թ.

Ս. Էջմիածին

digitised by A.R.A.R.@